ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04
ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/1 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **« 13 » « 11 » 2023թ.,**
ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի տեղակալ՝ Սեդա Մելքումյան
Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կազմակերպաիրավական վարչության պետ՝ Անուշ Մովսիսյան
Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի համալրման և կատարելագործման վարչության պետ Կարինե Գևորգյան
Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կազմակերպաիրավական վարչության գլխավոր մասնագետ՝ Հրայր Գինոսյան
Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կազմակերպաիրավական վարչության ավագ մասնագետ՝ Արմիկ Հայրապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. «ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ներկայացրած հայտերի բացումը տեղի է ունեցել 2023թ. նոյեմբերի 9-ին ժամը 11:00, armeps.am համակարգի միջոցով:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. փոստի հասցե	Հեռախոս	ՀՎՀՀ
1	«ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ	info@sempire.am	+374 44 88 33 66	02679378
2	«Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամ	info@hf.am	+374 95 41 28 84	00090751
3	«ԷԿԵՆԳ» ՓԲԸ	tenders@ekeng.am	+374 91 63 33 63	02707093
4	«Քեշ» ՍՊԸ	thtllctender@gmail.com	+374 33 13 44 44	01290459

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ ստացվել են, որոնց վերաբերյալ սահմանված կարգով ներկայացվել են պարզաբանումներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.

- «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանելու մասին հայտարարությունը /հրավերի հավելված 1.3/ կից փաստաթղթերով և մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքը / հրավերի հավելված 1.4/ կից փաստաթղթերով,
- «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանելու մասին հայտարարության աղյուսակում /հրավերի հավելված 1.3/ անհրաժեշտ է նշել Պայմանագրի կողմի տվյալները, մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում /հրավերի հավելված 1.4/ անհրաժեշտ է նշել Գործատուների տվյալները, ինչպես նաև բացակայում են աշխատակազմում ներառված մասնագետների որակավորման փաստաթղթերը,
- «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամի կողմից ներկայացված դիմում-հայտարարության 1)-ին ենթակետը չի համապատասխանում հրավերի պահանջներին /բացակայում է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը/,
- «Քեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հայտի ապահովումը, ինչպես նաև գնային առաջարկը հաստատված չէ մասնակցի կողմից և բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

4. **«ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի մասին**

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>

4.1 «Քեշ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և «ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/1» ծածկագրով հրավերի 8.2 կետը /բացակայում է հայտի ապահովումը, ինչպես նաև գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին/:

4.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ին, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին և «Հարմոնիա» տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթության զարգացման հիմնադրամին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկեն նշված անհամապատասխանությունը:

4.3 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա շտկված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ք. Երևան, Կառավարական տուն 1, 226 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Սեդա Մելքումյան	
Անդամներ՝	Անուշ Մովսիսյան	
	Կարինե Գևորգյան	
	Հրայր Գինոսյան	
	Արմիկ Հայրապետյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	